Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի մայիսի 27-ի N 12 - 3 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ) կանոնադրությունը, ՀՊՏՀ առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերը և ՀՊՏՀ այլ իրավական ակտեր:
   (1-ին կետը փոփ. 27.09.2024 N 1-8)
2. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՊՏՀ մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլաններով հաստատված՝ ուսանողների մագիստրոսական թեզի նախապատրաստման, պաշտպանության ներկայացման, վարչարարության կազմակերպման և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում հրապարակային պաշտպանության գործընթացներն ու պահանջները:
   (2-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)
3. Սույն կանոնակարգը հաստատվում և փոփոխությունների ու լրացումների է ենթարկվում ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ:
4. Մագիստրոսական թեզի կատարումն ու հրապարակային պաշտպանությունը, որպես ամփոփիչ գործընթացներ, հավաստում են ուսումնառության ընթացքում

ուսանողի կողմից կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքի ձեռքբերման մասին:

5. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն ուսանողի մասնագիտական կրթության ամփոփիչ ատեստավորման փուլն է:
6. Հրապարակային պաշտպանության արդյունքներով դրական գնահատականի շեմը հաղթահարած ուսանողներին շնորհվում է տվյալ մասնագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:
7. Մագիստրոսական թեզն ինքնուրույն աշխատանք է, որը կատարում է մագիստրատուրայի ուսանողը մասնագիտական գրականության, օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի, գիտական հոդվածների և վերլուծությունների ուսումնասիրության, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման, դրանց վերլուծության և արդյունքների ամփոփման հիման վրա՝ պահպանելով ակադեմիական բարեվարքության կանոնները:
8. Առանց աշխատությանը կամ սկզբնաղբյուրին պատշաճ հղման՝ այլոց հետազոտությունների արդյունքները, ներառյալ՝ ընդհանրացումները, եզրահանգումները, պնդումները, առաջադրած գաղափարներն ու թեզերը, արտահայտած մտքերը, որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելը **գրագողություն է**, որի առկայությունը (կամ բացակայությունը), ինչպես նաև թեզի ինքնատիպության աստիճանը ստուգվում են ՀՊՏՀ հակագրագողության համակարգով՝ նախքան մագիստրոսական թեզը մասնագիտական գրախոսման ուղարկելը: Գրագողության փաստ կարող է արձանագրվել նաև գրախոսի կողմից՝ մասնագիտական գրախոսման ժամանակ:

   (8-րդ կետը լրաց. 27.09.2024 N 1-8)
9. Ուսանողն իր նախաձեռնությամբ առավելագույնը 3 անգամ կարող է ստուգել իր մագիստրոսական թեզը ՀՊՏՀ հակագրագողության համակարգում:
10. Եթե մագիստրոսական թեզում ՀՊՏՀ հակագրագողության համակարգը կամ գրախոսը արձանագրում են գրագողության փաստ սույն կանոնակարգի 8-րդ կետով նախատեսված դեպքերին համապատասխան, ապա ուսանողը գրավոր ծանուցվում է այդ մասին և նրան արգելվում է մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը:

    (10-րդ կետը փոփ. խմբ. 27.09.2024 N 1-8)
11. 80%-ից ցածր ինքնատիպության աստիճան կամ թեզի ընդհանուր բառաքանակում ընդամենը մեկ գրականության աղբյուրին 5%-ը գերազանցող համընկնում ունեցող (առանց գրականության ցանկի) մագիստրոսական

թեզերը հրապարակային պաշտպանության թույլատրելու (կամ չթույլատրելու) հարցը որոշվում է ՀՊՏՀ գիտական խորհրդին կից գործող հրատարակչական հանձնաժողովի կողմից՝ գրավոր եզրակացությամբ:

(11-րդ կետը փոփ. խմբ. 27.09.2024 N 1-8)

12. ***(12-րդ կետը ուժը կորցրել է 27.09.2024 N 1-8)***
13. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանություն թույլատրվում է միայն այն դեպքում, եթե ուսանողն արդեն իսկ հավաքել է տվյալ կրթական ծրագրով նախատեսված բոլոր բաղադրիչների կրեդիտները:
14. Մագիստրոսական թեզ կարող են պաշտպանել միայն այն ուսանողները, որոնք ամբողջությամբ կատարել են տվյալ մասնագիտության կրթական ծրագիրը և համապատասխան հրամանով ավարտել տեսական դասընթացը:
15. Սահմանված կրեդիտները չհավաքած ուսանողները զրկվում են մագիստրոսական թեզ պաշտպանելու իրավունքից և հեռացվում ՀՊՏՀ-ից:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

16. Մագիստրոսական թեզերի թեմաները, որպես կանոն, առաջադրում են տվյալ կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի (ամբիոնների) ակադեմիական կազմի ներկայացուցիչներ: Թեմաների վերջնական ցանկը քննարկվում և հաստատվում է ամբիոնի կամ ամբիոնների համատեղ նիստում (եթե տվյալ կրթական ծրագիրն իրականացնում են մեկից ավելի ամբիոններ)՝ ուսանողների ընտրությանը ներկայացնելու վերջնաժամկետից առնվազն 2 ամիս առաջ:

(16-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

16.1. Նույն ժամկետում ուսանողները նույնպես կարող են առաջարկել մագիստրոսական թեզի թեմա, որը ևս ենթակա է քննարկման և հաստատման (կամ մերժման) նույն ամբիոնի (ամբիոնների) նիստում: Ուսանողներն իրենց նախընտրած թեման առաջարկում են ամբիոնին՝ լրացնելով սույն կանոնակարգի N 1 հավելվածի ձևանմուշով սահմանված դիմում-հայտը:

17. Ուսանողների առաջարկած և ամբիոնում հավանության արժանացած թեմաները հրապարակվում են առանձին ցանկով:
18. Մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերի դեպքում, անկախ ուսուցման տևողությունից, ամբիոնի հաստատած մագիստրոսական թեզի թեմաների ցանկը Moodle համակարգով ուսանողների ընտրությանն է առաջարկվում առաջին կուրսի առաջին կիսամյակում՝ մինչև հոկտեմբերի 30-ը:

(18-րդ կետը փոփ. խմբ. 27.09.2024 N 1-8)

19. Մագիստրոսական թեզի թեմաների ընտրությունը կատարվում է Moodle հարթակում (բացառությամբ ամբիոնի նիստում հաստատված՝ ուսանողների առաջարկած թեմաների):
20. Moodle հարթակում ուսանողների ընտրությանն առաջարկվող թեմաների քանակն առնվազն 20%-ով պետք է գերազանցի խմբի ուսանողների թիվը: Ընդ որում, թեմաների առնվազն 50%-ը պետք է լինեն թարմացված (նոր թեմա կամ հետազոտության օբյեկտի փոփոխություն):
21. Մագիստրոսական թեզի թեմաների վերջնական ցանկը (ըստ թեման կատարող ուսանողների և ղեկավարների)՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, նախ՝ հաստատվում է ամբիոնի, այնուհետև ֆակուլտետի խորհրդի նիստում՝ Moodle հարթակում ընտրությունից հետո մեկ ամսվա ընթացքում և ներկայացվում ուսումնական բաժին:
22. Ղեկավարի կամ մագիստրոսական թեզի թեմայի փոփոխություն թույլատրվում է կատարել բացառիկ դեպքերում՝ ըստ հիմնավորող փաստերի:
23. Առկա, ինչպես նաև հեռակա ուսուցման 2 տարի տևողությամբ կրթական ծրագրերի՝ նախորդող տարիներին չավարտած ուսանողները թեմայի ընտրության իրավունք ունեն յուրաքանչյուր ուսումնական տարվա **սեպտեմբերին**, իսկ առկա ուսուցման 1,5 տարի և հեռակա ուսուցման 2,5 տարի տևողությամբ կրթական ծրագրերի համապատասխան ուսանողները՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա **փետրվարին:**

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

24. Ամբիոնը նշանակում է մագիստրոսական թեզի ղեկավար՝ ամբիոնի ակադեմիական կազմից՝ պահպանելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 15-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված պայմանները:
25. Ամբիոնի վարիչը հաստատում է ուսանողի և ղեկավարի համատեղ աշխատանքի ստորագրված ժամանակացույցը՝ ըստ սույն կանոնակարգին կից N 6 հավելվածի ձևաթղթի:
26. Ակադեմիական կազմի անդամների կողմից մագիստրոսական թեզի ղեկավարման առավելագույն սահմանաչափերը կարգավորվում են ՀՊՏՀ գիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 14-ի «Ուսումնական աշխատանքների ծավալի հաշվարկի և դասախոսական կազմի ուսումնական

բեռնվածության նորմատիվները հաստատելու մասին» N 9 - 2 որոշմամբ սահմանված նորմատիվներով:

27. Սույն կանոնակարգը չի արգելում նաև այլ ամբիոնների ակադեմիական կազմի ներկայացուցիչների, այլ բուհերի կամ կազմակերպությունների համապատասխան որակավորում, գիտական աստիճան, գիտական կոչում կամ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 15-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պաշտոններին համարժեք պաշտոն զբաղեցնող անձանց կողմից մագիստրոսական թեզի ղեկավարումը:

(27-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

28. Մագիստրոսական թեզի նախապատրաստման ընթացքում ղեկավարը պարտավոր է իրականացնել հետևյալ գործառույթները.
    - 28.1. ուսանողին ուղղորդել անհրաժեշտ մասնագիտական գրականության, հետազոտությունների, հրապարակումների, տվյալների, վիճակագրական տեղեկությունների աղբյուրների ընտրության հարցերում,
    - 28.2. ուսանողին ուղղորդել հետազոտության օբյեկտի և նպատակների սահմանման, խնդիրների առաջադրման, հետազոտության մեթոդների ընտրության հարցերում,
    - 28.3. ուսանողի հետ պատշաճ կերպով քննարկել, անհրաժեշտ խորհրդատվություն և օգնություն տրամադրել մագիստրոսական թեզի առանձին բաժինների պատրաստման գործընթացում,
    - 28.4. գնահատել կատարված աշխատանքի համապատասխանությունը մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին և տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն,
    - 28.5. ուսանողի կատարած աշխատանքի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ հաղորդել ամբիոնի նիստերում,
    - 28.6. երաշխավորել (կամ չերաշխավորել) մագիստրոսական թեզը հրապարակային պաշտպանության՝ ելնելով ուսանողի ապահոված արդյունքներից և սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանության աստիճանից,
    - 28.7. աշխատել ուսանողի հետ մագիստրոսական թեզի պաշտպանության ժամանակ՝ ելույթի և շնորհանդեսի նախապատրաստման ուղղությամբ:

29. Մագիստրոսական թեզի ղեկավարի կողմից ուղեկից էլեկտրոնային նամակով ամբիոն ներկայացված (ուղարկված) աշխատանքը համարվում է երաշխավորված հրապարակային պաշտպանության:
(29-րդ կետը փոփ. խմբ. 27.09.2024 N 1-8)
30. Ղեկավարի կողմից չերաշխավորված մագիստրոսական թեզը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության:
31. Ղեկավարը և ուսանողը նույնչափ պատասխանատու են սահմանված ժամկետում և սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան մագիստրոսական թեզ ներկայացնելու համար:
32. ՀՊՏՀ ակադեմիական կազմի այն ներկայացուցիչները, որոնց ղեկավարած մագիստրոսական թեզերի ստուգման ընթացքում 2 տարի անընդմեջ բացահայտվում են գրագողության փաստեր կամ սահմանվածից ցածր ինքնատիպություն, ենթակա են կարգապահական տույժի:

4. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

33. Մագիստրոսական թեզի շրջանակում հետազոտությունը կատարվում է ըստ հետևյալ հիմնական փուլերի.
    33.1. մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն,
    33.2. հետազոտության օբյեկտի, առարկայի հստակեցում և նպատակի սահմանում, խնդիրների առաջադրում,
    33.3. մագիստրոսական թեզի թեմատիկ և առնչվող գրականության, հրապարակումների և հետազոտական նյութերի ուսումնասիրություն, գրականության ակնարկի շարադրում,
    33.4. հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդների) ուսումնասիրություն, կիրառվող մեթոդաբանության ընտրություն և դրա հիմնավորում,
    33.5. վիճակագրական տեղեկությունների հավաքագրում, ամփոփում և մշակում,
    33.6. վերլուծության (վերլուծությունների) իրականացում, արդյունքների ամփոփում և շարադրում,
    33.7. հետազոտության արդյունքների ամփոփում՝ որպես եզրակացություններ,
    33.8. օգտագործված գրականության ցանկի ձևավորում,
    33.9. մագիստրոսական թեզի համառոտագրի, հիմնաբառերի և ներածության բաժինների շարադրում:

34. Մագիստրոսական թեզի նախապատրաստումն ու պաշտպանությունն իրականացվում են ըստ հետևյալ քայլերի հաջորդականության.
    34.1. ընտրված թեմայի և ղեկավարի հաստատում ամբիոնում և ֆակուլտետի գիտական խորհրդում,
    34.2. ղեկավարի հետ աշխատանքի կատարման ժամանակացույցի կազմում և հաստատում՝ թեմայի ընտրությունից հետո առավելագույնը **մեկ ամսվա** ընթացքում,
    34.3. մագիստրոսական թեզի շարադրում,
    34.4. մագիստրոսական թեզի ներկայացում ամբիոն,
    34.5. մագիստրոսական թեզի ստուգում հակագրագողության համակարգում,
    34.6. մագիստրոսական թեզի նախնական պաշտպանություն,
    34.7. մագիստրոսական թեզի գրախոսություն,
    34.8. մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանություն:
35. Մագիստրոսական թեզի կատարման հիմնական փուլերի ժամկետներն են.
    35.1. մագիստրոսական թեզի առանձին բաժինների ներկայացում՝ ըստ ղեկավարի հետ համաձայնեցված ժամանակացույցի,
    35.2. մագիստրոսական թեզի ներկայացում ամբիոն՝ համաձայն տվյալ ուսումնական տարվա համար ՀՊՏՀ հաստատած ժամանակացույցի (տվյալ կրթաձևի համար սահմանված վերջնաժամկետում),
    35.3. ամբիոնի կողմից մագիստրոսական թեզի ստուգում ՀՊՏՀ հակագրագողության համակարգում՝ գրախոսության ուղարկելուց առնվազն 10 օր առաջ,
    35.4. մագիստրոսական թեզի գրախոսության կազմակերպում՝ պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ:

5. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

36. Շարադրվում է տպագիր, ծավալը՝ 8100-11400 բառի սահմանում՝ առանց հավելվածների և գրականության ցանկի, էջում՝ 28-32 տող, տառային ձևաչափը՝ Unicode, տառատեսակը՝ GHEA Grapalat, օտարալեզու շարադրանքը՝ Times New Roman, տառաչափը՝ 12, տողերի միջակայքը՝ 1,5, էջի աջ կողմից՝ 10 մմ լուսանցք, ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ, էջերի համարակալումը՝ ներքևում՝ աջից: Տիտղոսաթերթը չի համարակալվում: Տեքստը շարադրվում է A4 ձևաչափի սպիտակ թղթի մեկ կողմի վրա:
37. Մեջբերումները, հղումներն ու ծանոթագրությունները պետք է նշվեն յուրաքանչյուր էջի տողատակում (ներառելով հեղինակի ազգանունը և անունը

(կամ հրապարակող կազմակերպության ամբողջական անվանումը), աշխատության անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, տարեթիվը, էջը (էջերը): Էլեկտրոնային նյութերից մեջբերումներ կատարելիս հարկավոր է մատնանշել ոչ միայն տվյալ կայքի ամբողջական հասցեն, այլև այն էջը (համարակալման պարագայում), որից կատարվել է մեջբերումը կամ հղումը և մուտքի օրը:

38. Աղյուսակների տեղաբաշխումը՝ ըստ ծավալի: Ծավալուն աղյուսակները տեղադրվում են հավելվածում, իսկ փոքրերը՝ տեքստում: Յուրաքանչյուր աղյուսակ պետք է ունենա հերթական համար, վերնագիր (գրվում է աղյուսակի վերևում) և չափի միավոր:
39. Գծապատկերներն ու գծանկարները ներկայացվում են առանձին համարակալմամբ, և դրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա հերթական համար և վերնագիր (գրվում է ներքևում):
40. Նկարները ներկայացվում են առանձին համարակալմամբ, և դրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա հերթական համար և վերնագիր (գրվում է ներքևում):
41. Աղյուսակները, գծանկարները, գծապատկերներն ու նկարները մագիստրոսական թեզում համարակալվում են 1-ից մինչև N-րդը՝ առանձին-առանձին: Արգելվում է յուրաքանչյուր նոր բաժնի շարադրանքում համարակալումը սկսել 1-ից:
42. Մագիստրոսական թեզի հիմնական կառուցվածքային բաժիններն են.
    - տիտղոսաթերթ,
    - բովանդակություն,
    - համառոտագիր
    - ներածություն,
    - գրականության ակնարկ,
    - հետազոտության մեթոդաբանություն,
    - վերլուծություն,
    - եզրակացություն,
    - օգտագործված գրականության ցանկ,
    - հավելված՝ ըստ անհրաժեշտության:
43. **Տիտղոսաթերթը** մագիստրոսական թեզի առաջին էջն է, որը լրացվում է ըստ սույն կանոնակարգի N 2 հավելվածի ձևաչափի:
44. Հրապարակային պաշտպանության ներկայացվող թեզը հաստատվում է ուսանողի, ղեկավարի և ամբիոնի վարիչի ստորագրություններով:

45. Տիտղոսաթերթին հաջորդում է **բովանդակությունը**, որտեղ նշվում են աշխատանքի բոլոր բաժինները, այդ թվում՝ գրականության ցանկը և հավելվածները:
46. Բովանդակության մեջ նշվում են բաժինների սկսվող էջերը: Բովանդակության վերնագրերը պետք է կրկնեն տեքստի վերնագրերը:
47. Մագիստրոսական թեզի **վերնագիրը** հետազոտության թեմայի և բովանդակության համապարփակ արտացոլումն է:
48. **Համառոտագիրը** մագիստրոսական թեզի հիմնական բովանդակության և ստացված արդյունքների ընդհանրական ամփոփումն է, որտեղ ներկայացվում են առաջադրված խնդիրը (խնդիրները), նպատակը, կիրառված մեթոդաբանությունը, բացահայտումները (արդյունքները) և հիմնական եզրակացությունները:
49. **Ներածությունը** հետազոտության հիմնական ուղերձն է, որտեղ հիմնավորվում է թեմայի տեսական և կիրառական նշանակությունը:
50. **Գրականության ակնարկը** մագիստրոսական թեզի թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրությունն է և հետազոտության շրջանակներում արծարծված խնդիրների լուծման ուղղությամբ այլ հետազոտողների՝ մինչ այդ իրականացրած վերլուծությունների ընդհանրացումը (հետազոտություններ, հոդվածներ, հրապարակումներ, թեզեր, մենագրություններ և այլն):
51. **Հետազոտության մեթոդաբանության բաժնում** հիմնավորվում են մեթոդի մոտեցումների ընտրությունն ու նպատակահարմարությունը՝ առաջադրված խնդիրների լուծման և հետազոտության նպատակի իրագործման համատեքստում:
52. **Վերլուծության և արդյունքների** բաժնում իրականացվում է հետազոտության օբյեկտի համակողմանի վերլուծություն, բացահայտվում են վերջինիս օրինաչափությունները, փոփոխության միտումները, զարգացման ուղղությունները, խոչընդոտները, սահմանափակումները և այլն, որոնք շարադրանքի վերջում հակիրճ կերպով ամփոփվում են որպես տեսական և (կամ) կիրառական արդյունքներ:
53. **Եզրակացությունը** հետազոտական աշխատանքի ամփոփիչ բաժինն է, որտեղ ներկայացվում է ներածությունում առաջադրված խնդրի (խնդիրների) լուծումը (լուծումները):
54. **Գրականության ցանկն** ամփոփում է հետազոտության ընթացքում օգտագործված գրականությունը, որի առնվազն 70%-ը պետք է արտացոլված լինի աշխատանքում՝ հղումների տեսքով:

55. Աշխատանքը մեկնաբանող (և (կամ) պարզաբանող) հավելյալ նյութերը ներկայացվում են հավելվածներում, որոնք պետք է լինեն վերնագրված, համարակալված, սակայն առանց էջակալման:
56. Մագիստրոսական թեզի՝ սույն կանոնակարգի 42-54-րդ կետերում սահմանված բաժինների բովանդակային և տեխնիկական ձևավորումը պետք է համապատասխանի սույն կանոնակարգին կից N 3 հավելվածի մեթոդական ուղեցույցի պահանջներին:

6. ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

57. **Մեջբերումը** մագիստրոսական թեզի մեջ այլ աղբյուրներից տեքստերի, դրանց առանձին մասերի (մտքի, ձևակերպման, բնորոշման, բանաձևերի, տվյալների, աղյուսակների, գծապատկերների, այլ տարրերի) օգտագործումն է սկզբնաղբյուրի պարտադիր նշումով՝ մատենագիտական հղումով:
58. Հղումը գիտական հետազոտության պարտադիր բաղադրիչն է և գիտական հաղորդակցության միջոցը:
59. Մագիստրոսական թեզի հեղինակը պարտավոր է պահպանել հղման էթիկայի և իրավական կանոնները:
60. Մեջբերման հղումը պետք է ճշգրիտ և լիարժեք տեղեկություններ պարունակի ոչ միայն մեջբերվող աշխատության, այլև հեղինակի, ամսագրի, գրքի, հրատարակչության, հրատարակման տարեթվի և այլնի վերաբերյալ:
61. Հղումը պետք է հնարավորություն տա գտնելու սկզբնաղբյուրը, որտեղից կատարվել է մեջբերումը՝ ստանալով ամբողջական տեղեկություն վերջինիս վերաբերյալ:
62. Տպագիր նյութերից մեջբերումներին հղումը պետք է պարունակի սույն կանոնակարգի 37-րդ կետով և N 3 հավելվածի 8-րդ կետի 8.1-ին և 8.2-րդ ենթակետերով սահմանված գրականության ցանկի ձևավորմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ՝ ըստ ճշգրիտ էջերի, որոնցից կատարվել են մեջբերումները:
63. Էլեկտրոնային աղբյուրներից կատարված մեջբերումների դեպքում, որպես հղում, տրվում է կայքէջի էլեկտրոնային հասցեն, որը պետք է լինի ակտիվ և յուրաքանչյուր պահի հասանելիություն ապահովի սկզբնաղբյուրի այն հատվածին, որից կատարվել է հղումը: Էլեկտրոնային հասցեին հղման դեպքում պետք է նշվեն մուտքի օրն ու ժամը:

64. Մագիստրոսական թեզում սկզբնաղբյուրին մատենագիտական հղում կատարելը **պարտադիր է հետևյալ դեպքերում**.
   - այլ հեղինակների աշխատություններից տեքստի, դրա առանձին մասերի, բանաձևերի, բնորոշումների, սահմանումների, գաղափարների, աղյուսակների ուղղակի և բառացի մեջբերում,
   - տեքստի, դրա առանձին մասերի, բանաձևերի, բնորոշումների, սահմանումների, գաղափարների, աղյուսակների ոչ բառացի մեջբերում (перефразирование, paraphrasing),
   - այլ տեքստի ոչ բառացի մեջբերում (перефразирование, paraphrasing),
   - այլ հրապարակումներում տեքստի կամ դրա առանձին մասի վերլուծություն,
   - քննարկվող նյութի առավել ամբողջական տարբերակի ներկայացում:

   (64-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

65. Մագիստրոսական թեզում ուղղակի մեջբերումների, փոխառությունների, մտքի վերաշարադրման (перефразирование, paraphrasing) և մեջբերումների ամփոփումների ձևակերպումը, ինչպես նաև դրանց պատշաճ հղումների իրականացումը պետք է համապատասխանեն սույն կանոնակարգի N 4 հավելվածով սահմանված պահանջներին:

   (65-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

66. Սույն կանոնակարգի 64-րդ կետով սահմանված դեպքերում հղման բացակայությունը, ուղղակի մեջբերումների, փոխառությունների, մտքի վերաշարադրման (перефразирование, paraphrasing) և մեջբերման ամփոփումների՝ սույն կանոնակարգի N 4 հավելվածին չհամապատասխանող ձևավորումը, ինչպես նաև «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ակադեմիական գրագողության կանխարգելման կանոնակարգի» համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերի առկայությունը մագիստրոսական աշխատանքում համարվելու են **գրագողություն**:

   (66-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

67. Մագիստրոսական թեզում գրագողության փաստի առկայության դեպքում ուսանողի նկատմամբ կիրառվելու են սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված պահանջը, ինչպես նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ակադեմիական գրագողության կանխարգելման կանոնակարգի» համապատասխան հոդվածներով նախատեսված գործողությունները:

68. Մագիստրոսական թեզում պատշաճ հղումների, սակայն ոչ բավարար գիտական մշակմամբ ուղղակի մեջբերումների, փոխառությունների, մտքի վերաշարադրանքի (перефразирование, paraphrasing) կամ մեջբերման ամփոփումների մեծ ծավալի և սույն կանոնակարգով սահմանված ինքնատիպության նվազագույն աստիճանից ցածր ինքնատիպություն ունենալու պարագայում ուսանողի նկատմամբ կիրառվելու է սույն կանոնակարգի 11-րդ կետի պահանջը:
(68-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

7. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

69. Մագիստրոսական թեզն ուղարկվում է արտաքին գրախոսության այլ համալսարաններ, թեմային առնչվող գիտական կամ տվյալ բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող կազմակերպություններ:
    69.1. ՀՀ կառավարության կողմից սահմանված արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում, լիազոր մարմնի համաձայնությամբ, մագիստրոսական թեզի գրախոսությունը կարող է կազմակերպվել ՀՊՏՀ տվյալ ամբիոնի մասնագիտական բնագավառին հարակից այլ մասնագիտական ամբիոններում:
70. Գրախոսության նպատակն է մագիստրոսական թեզին սույն կանոնակարգով ներկայացվող պահանջների կատարման աստիճանի գնահատումը:
71. Գրախոսության գործընթացին հատկացվում է 5 աշխատանքային օր: Բացառիկ դեպքերում հաստատության ղեկավարի ուղեկցող հիմնավորող գրությամբ գրախոսությունը կարող է ներկայացվել ավելի ուշ, բայց ոչ ավելի, քան ուսանողի հրապարակային պաշտպանությունից 3 օր առաջ:
72. Գրախոսությանը ներկայացվող պահանջների չպահպանման դեպքում գրախոսը չի վարձատրվում, իսկ մագիստրոսական թեզը տրվում է գրախոսելու մեկ այլ մասնագետի:
73. Գրախոսը սույն կանոնակարգին կից N 7 հավելվածի ձևաթղթի ձևաչափով իրականացնում է գրախոսություն, որը պարտադիր պետք է բովանդակի.
    73.1. մագիստրոսական թեզի նպատակը, ընտրված օբյեկտը և սահմանված առարկան, դրանց դերը համալիր և համակողմանի հետազոտության մեջ,
    73.2. հետազոտական աշխատանքում առաջադրված խնդիրների լուծումների գնահատումը՝ ըստ սահմանված նպատակի իրագործման,

73.3. գրականության ակնարկում այլոց կողմից տվյալ թեմայի ուսումնասիրվածության նյութերի ներկայացվածության չափը (աստիճանը),

73.4. թեմայի լուսաբանման համակողմանիության ու տեսակետների բազմազանության ապահովվածությունը՝ ըստ ընտրված գրականության և այլ աղբյուրների,

73.5. տվյալ հիմնախնդրի արդի վիճակի ու միտումների ժամանակագրորեն ճիշտ արտահայտվածությունը՝ ըստ ընտրված գրականության աղբյուրների և վիճակագրական տվյալների,

73.6. ուղղակի մեջբերումների, բառափոխությունների (փոխառությունների), մտքի վերաշարադրանքի (перефразирование, paraphrasing) և մեջբերման ամփոփումների ընթացքում ուսանողի կողմից ակադեմիական բարեվարքության կանոնների պահպանման գնահատումը,

(73-րդ կետի 72.6-րդ ենթակետը փոփ. 27.09.2024 N 1-8)

73.7. ընտրված հետազոտության մեթոդաբանության՝ որպես հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրման և առաջադրված խնդիրների լուծման ու հետազոտության նպատակի ապահովման միջոցի գնահատումը,

73.8. վերլուծությունների և ամփոփումների բաժնում հետազոտության օբյեկտի համակողմանի վերլուծության, օբյեկտի օրինաչափությունների, փոփոխության միտումների, զարգացման ուղղությունների, խոչընդոտների ու սահմանափակումների բացահայտվածության, ինչպես նաև վիճակագրական տվյալների արդիականության գնահատումը,

73.9. եզրակացությունների բաժնի՝ կատարված հետազոտության տրամաբանական ընդհանրացումների և եզրահանգումների ամբողջություն հանդիսանալու, ինչպես նաև գրականության ակնարկի, ամփոփման հատվածի և վերլուծության ու ամփոփումների բաժնի պարզ վերատպություն չհանդիսանալու գնահատումը,

73.10. կատարված եզրակացությունների համապատասխանությունը հետազոտության բովանդակությանը,

73.11. մագիստրոսական թեզի համապատասխանությունը (կամ անհամապատասխանությունը) առաջադրված պահանջներին,

73.12. մագիստրոսական թեզի հեղինակի՝ մագիստրոսի որակավորման շնորհման արժանի լինելու (կամ չլինելու) հանգամանքը:

74. Գրախոսությունը հրապարակային պաշտպանությունից առնվազն 3 օր առաջ պարտադիր կերպով տրամադրվում է ուսանողին՝ գրախոսի դիտարկումներին և դիտողություններին ծանոթանալու ու հրապարակային պաշտպանության ընթացքում դրանց պատասխանելու համար:

8. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

75. Հրապարակային պաշտպանությունից առաջ ուսանողը ղեկավարի ուղղորդմամբ պատրաստում է ելույթի խոսք և շնորհանդեսի նյութեր:
76. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունից առաջ ղեկավարը կազմակերպում է նախնական պաշտպանություն, որի նպատակը հրապարակային պաշտպանությանն ուսանողներին նախապատրաստելն է:
77. Մագիստրոսական թեզի նախնական պաշտպանության ժամանակ աշխատանքի բովանդակությունը, հետազոտության արդյունքներն ու թեզերը ներառող շնորհանդեսը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 30 րոպե ժամանակ:
78. Նախնական պաշտպանության ժամանակ ղեկավարը ստուգում է ուսանողի ելույթի բովանդակությունն ու կառուցվածքը, ներկայացման որակն ու ժամանակը, ելույթի ու շնորհանդեսի բովանդակության համապատասխանությունը մագիստրոսական թեզի բովանդակությանը:
79. Մագիստրոսական թեզում կամ շնորհանդեսի պատրաստման գործընթացում բացահայտված թերությունները վերացնելու համար ուսանողին տրվում է ժամանակ՝ չխախտելով ամփոփիչ ատեստավորման՝ ժամանակացույցով սահմանված ժամկետները:
80. Ուսանողը մագիստրոսական թեզը պաշտպանում է տվյալ ուսումնական տարվա համար ձևավորված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առջև:
81. Հրապարակային պաշտպանության ընթացքում՝ կատարված աշխատանքի բովանդակությունը, առանցքային թեզերը ներառող շնորհանդեսը ներկայացնելու, ինչպես նաև ելույթի, հարցերին և գրախոսի կարծիքին պատասխանելու համար ուսանողին տրամադրվում է 45 րոպե ժամանակ, որից 30-ը՝ ելույթին:
82. Ուսանողը պարտավոր է լիարժեք կերպով պատասխանել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների հարցադրումներին և գրախոսության դիտողություններին: Գրախոսի դիտողությունները չընդունելու պարագայում նա պարտավոր է ներկայացնել սպառիչ հիմնավորումներ:

83. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը, ըստ ուսանողի ելույթի, հնչեցված հարցերին տրված պատասխանների և, իհարկե, ըստ աշխատանքի դիտարկման և գրախոսության, գնահատում է ուսանողին (սույն կանոնակարգի N 5 հավելվածի ձևաթղթերում):
84. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանության կարգը, գնահատման սանդղակը, դրական գնահատականի շեմը և գնահատականի ամփոփման կարգը սահմանվում են առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերի՝ համապատասխանաբար 160-165-րդ և 131-141-րդ կետերով:
(84-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)
85. Ուսանողի գնահատականի ամփոփումը և հրապարակումը կազմակերպվում են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի ընթացակարգի» համաձայն:
86. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատականի բողոքարկումն իրականացվում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման գնահատականի քննարկման և բողոքարկման կարգի» համաձայն:
87. Մագիստրոսական թեզերը պաշտպանության օրվանից հետո 3 տարի ժամկետով պահպանվում են ՀՊՏՀ էլեկտրոնային արխիվում:
(87-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

88. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
89. ***(89-րդ կետը ուժը կորցրել է 27.09.2024 N 1-8)***
90. ***(90-րդ կետը ուժը կորցրել է 27.09.2024 N 1-8)***
91. ***(91-րդ կետը ուժը կորցրել է 27.09.2024 N 1-8)***
92. ***(92-րդ կետը ուժը կորցրել է 27.09.2024 N 1-8)***
93. ***(93-րդ կետը ուժը կորցրել է 27.09.2024 N 1-8)***

Հավելված N 1

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի _____
ամբիոնի վարիչ պարոն (տիկին) _____
_____ մասնագիտության
(կրթական ծրագրի) մագիստրատուրայի առկա (հեռակա)
ուսուցման համակարգի _____ կուրսի ուսանող
Հեռախոս՝ _____
Էլեկտրոնային հասցե՝_____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլատրել կատարել մագիստրոսական թեզ հետևյալ վերնագրով՝ «_____»:

Դիմող՝ _____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

«_____» _____ 20 _____ թ.

(կանոնակարգի N 1 հավելվածը փոփ. 27.09.2024 N 1-8)

Հավելված N 2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

Թեմա

Ֆակուլտետ

Ամբիոն

Մասնագիտություն

Կրթական ծրագիր

Մագիստրոսական թեզը երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Ամբիոնի վարիչ՝ _____ (անուն, ազգանուն)

Մագիստրոսական թեզը պատրաստ է հրապարակային պաշտպանության:

Ղեկավար՝ _____ (անուն, ազգանուն)

Հավաստում եմ, որ մագիստրոսական թեզն ինքնուրույն է կատարված:

Կատարող՝ _____ (անուն, ազգանուն)

Երևան 20 _____

Հավելված N 3

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Մագիստրոսական թեզի **վերնագիրը**.
   - պետք է լինի կարճ (չգերազանցի 10 բառը), հստակ և արտահայտի խնդրի բովանդակությունը,
   - ակադեմիական առումով, պետք է լինի գրագետ ձևակերպված՝ հետազոտության ոլորտի հստակեցմամբ,
   - պետք է օգնի լուծել հետազոտության շրջանակում ձևակերպված խնդիրը կամ ստանալ առաջադրված հարցերի պատասխանները,
   - չի կարող լինել կրճատումներով, հապավումներով կամ սկզբնատառերով (abbreviations, acronyms and initials):
2. **Համառոտագիրը** պետք է լինի.
   - տեղեկատվական բնույթի (չպետք է պարունակի ընդհանուր ձևակերպումներ),
   - բովանդակային (թեզի հիմնական բովանդակությունն ու հետազոտության գլխավոր արդյունքները ներառող),
   - կառուցված՝ ըստ նախանշված ձևաչափի,
   - կոմպակտ (չպետք է ունենա ենթաբաժիններ, աղյուսակներ, գծապատկերներ, հղումներ):

   Սովորաբար, համառոտագիրը գրվում է հետազոտության ավարտին և շարադրվում մինչև 200 բառի շրջանակում:
3. **Ներածությունում** հիմնավորվում են հետազոտության թեմայի արդիականությունը, օբյեկտն ու առարկան, ազդեցության շրջանակը, թեմայի վերաբերյալ առավել հայտնի և հեղինակավոր աշխատությունները, օգտագործված տվյալների աղբյուրները, առաջադրված խնդրի (խնդիրների) լուծման ուղիների և մեթոդների կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև ակնկալվող արդյունքը: Շարադրվում է 1000-1200 բառի շրջանակում:
   3.1. **Ներածությունում** առանձին պարբերությամբ ներկայացվում են մագիստրոսական թեզի **նպատակն ու խնդիրները**:
   3.2. **Նպատակի և խնդիրների** միջոցով ներկայացվում են մագիստրոսական թեզի շրջանակում իրականացվող հետազոտության առանցքային

հարցերը: Հետազոտական աշխատանքում առաջադրված խնդիրների լուծումները նպաստում են նպատակի իրագործմանը:

3.3. Նպատակը չի կարող նույնությամբ կրկնել թեզի վերնագիրը:

3.4. Անհրաժեշտ է հետազոտության վերջում մատնանշել, թե որքանով է իրագործվել նպատակը:

3.5. Հետազոտությունը չի կարող համարվել ավարտուն, եթե առաջադրված նպատակը չի իրագործվել:

3.6. Հետազոտության **խնդիրները** (objectives) սահմանում են հետազոտության նպատակին հասնելու քայլերն ու ուղիները, մատնանշում հետազոտության առանցքային հարցադրումներն ու հիմնախնդիրը և օգնում գտնել դրանց լուծումները:

3.7. Հետազոտության խնդիրները ձևակերպելիս պետք է համոզված լինել դրանց որոշակի, ճշգրիտ և հստակ սահմանված, չափելի, իրատեսական և իրագործելի (SMART) լինելու մեջ:

3.8. Նպատակները և խնդիրները սահմանվում են մինչև 200 բառի շրջանակում:

4. **Գրականության ակնարկում** պետք է ներկայացված լինեն թեմայի ուսումնասիրվածության աստիճանը և ուղղությունները՝ նշելով համապատասխան ակադեմիական հետազոտություններն ու հեղինակներին (ով՝ որ ուղղությամբ և ինչ խորությամբ է զարգացրել հետազոտական տվյալ թեման): Պետք է շարադրված լինի 1500-2000 բառի շրջանակում:

4.1. Գրականության ակնարկ գրելիս անհրաժեշտ է օգտվել ակադեմիական հավաստի աղբյուրներից:

4.2. Առկա հասանելի գրականությունը պայմանականորեն դասակարգվում է ըստ առաջնային և երկրորդային աղբյուրների: Խորհուրդ է տրվում առավելապես հիմնվել առաջնային աղբյուրների վրա:

4.3. Հետազոտության թեմային անմիջականորեն առնչվող առաջնային հավաստի աղբյուրներ են համարվում մասնագիտական և գիտական գրականությունը, հղման բարձր համաթիվ և ազդեցության գործոն ունեցող գիտական ամսագրերը, մասնագիտական տեղեկագրերը, միջազգային և տեղական հեղինակավոր կազմակերպությունների, ազգային վիճակագրական մարմինների վերլուծություններն ու հրապարակումները, պետական գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվությունները:

4.4. Հետազոտության համար օգտակար երկրորդային գրականություն կարող են լինել նաև գիտաժողովներին ներկայացված հոդվածները,

հրատարակչությունների կայքերը, ակադեմիական քննարկումների առցանց հարթակները և տվյալների առցանց բազաները (կայքեր, որոնք հավաքագրում են ակադեմիական հոդվածներ և վերլուծականներ կամ տնտեսական տվյալներ), մասնավոր ոլորտի կազմակերպությունների հրապարակումներն ու հաշվետվությունները, համացանցային այլ աղբյուրներ:

(կանոնակարգի N 3 հավելվածի 4-րդ կետի 4.4-րդ ենթակետը փոփ. 27.09.2024 N 1-8)

4.5. Գրականության ակնարկի համար հիմք չեն կարող հանդիսանալ թերթերը, Վիքիփեդիան, բլոգները և նմանատիպ այլ տեղեկատվական աղբյուրներ:

4.6. Գրականության ակնարկում դիտարկված և քննարկված գրականության ծավալը պետք է բավարարի հետազոտության մեջ առաջ քաշված պնդումների հիմնավորմանը:

4.7. Հետազոտողը չպետք է պարզապես ստեղծի թեմային մասնակիորեն առնչվող աշխատությունների ցանկ՝ օգտագործված գրականության քանակն արհեստականորեն համալրելու նպատակով:

4.8. Չի թույլատրվում այլ հետազոտողների գրականության ակնարկներից հատվածական մեջբերումներ կատարել, ինչպես նաև դրանք ներառել հղումների ցանկում:

4.9. Մեջբերելիս հեղինակը պարտավոր է հաշվի առնել ակադեմիական բարեվարքության նորմերը:

4.10. ***(կանոնակարգի N 3 հավելվածի 4-րդ կետի 4.10-րդ ենթակետը ուժը կորցրել է 27.09.2024 N 1-8)***

4.11. Գրականության ակնարկը ցանկալի է ավարտել չլուծված խնդրի ներկայացմամբ, նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքներում առկա հակասությունների, թերությունների, բացթողումների և սահմանափակումների բացահայտմամբ ու վերհանմամբ, ինչպես նաև տվյալ ոլորտում ընտրված թեմայի շրջանակում շարունակական հետազոտության իրականացման անհրաժեշտության հիմնավորմամբ: Այս դեպքում հեղինակը պետք է ներկայացնի նաև թեման հետազոտած հեղինակների և ուղղությունների վերաբերյալ իր դիրքորոշումը՝ հիմնավորելով դա:

5. **Հետազոտության մեթոդաբանության** բաժնում կարող են ներկայացվել և՛ համընդհանուր ճանաչում, և՛ լայն կիրառություն ունեցող հետազոտության մեթոդներ, և՛ սեփական մեթոդական մոտեցումը, եթե այդպիսին առկա է: Հետազոտական աշխատանքի համակողմանիությունն ու փաստարկվածությունը պայմանավորված են օգտագործված

մեթոդաբանությամբ և դրա ընտրության հիմնավորմամբ: Շարադրվում է 750-1500 բառի շրջանակում:

5.1. Պարտադիր է նշել կիրառված մեթոդների սկզբնաղբյուրները:

5.2. Հայտնի մեթոդի (մեթոդների) կիրառման պարագայում մանրամասն բացատրելու կարիք չկա, բավարար է ներկայացնել ընդհանուր մոտեցումն ու նշել սկզբնաղբյուրը:

5.3. Եթե հեղինակն օգտագործում է սեփական մեթոդաբանական մոտեցում կամ հայտնի մեթոդների ձևափոխված տարբերակ, ապա անհրաժեշտ է մանրամասն նկարագրել նոր մեթոդը կամ առաջարկվող փոփոխությունը:

5.4. Հետազոտության արդյունքները պետք է ներկայացնել ըստ կիրառված և նկարագրված մեթոդների:

5.5. Հետազոտության մեթոդաբանությունը շարադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել քայլերի հետևյալ հաջորդականությունը.

5.5.1. Նկարագրել ընտրված մեթոդը՝ ներկայացնելով.

- հետազոտության իրականացման մեթոդաբանությունն ու մոտեցումները,
- տվյալների հավաքագրման կամ ստեղծման մեթոդները,
- կիրառվող ոչ հանրահայտ մեթոդի էությունը,
- այն աղբյուրները, որոնք հիմք են հանդիսացել մեթոդի ընտրության համար:

5.5.2. Հիմնավորել ընտրված մեթոդի նպատակահարմարությունը՝ նկարագրելով.

- տվյալների հավաքագրման չափանիշները,
- մեթոդի թերություններն ու առավելությունները,
- հետազոտության ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման ուղիները,
- կիրառելի այլ մեթոդներ, որոնք պակաս նպատակահարմար են ընտրված մեթոդի համեմատ:

5.5.3. Բնութագրել ընտրված մեթոդների և առաջադրված նպատակի կապը՝ ընդգծելով.

- իրականացված վերլուծության համապատասխանությունը հետազոտության նպատակին,
- իրականացված վերլուծությունը որքանով է նպաստել առաջադրված խնդիրների լուծմանը,

- հետազոտության արդյունքում կատարված բացահայտումների կիրառելիությունն ու օգտակարությունը:

6. **Վերլուծության** բաժնում համակողմանիորեն բացահայտվում են հետազոտության օբյեկտի օրինաչափությունները, փոփոխության միտումները, զարգացման ուղղությունները, խոչընդոտները, սահմանափակումները և այլն, որոնք ամփոփվում են որպես տեսական և (կամ) կիրառական արդյունքներ: Շարադրանքը պետք է լինի 3500-4500 բառի շրջանակում: Անհրաժեշտության դեպքում այս բաժինը կարող է ունենալ նաև ենթաբաժիններ:
   6.1. Վերլուծությունների և բացահայտումների որակը մեծապես կախված է դրանց իրականացման ճշգրտությունից՝ ապահովված ամուր տեսական հենքով:
   6.2. Վերլուծությունն իրականացվում է՝ առաջնորդվելով քննադատական և ապացուցողական մոտեցումներով:
   6.3. Քանակական ցուցանիշների վերլուծությունը պետք է իրականացվի տնտեսամաթեմատիկական և վիճակագրական գործիքակազմի, սոցիոլոգիական հարցման մեթոդների օգնությամբ:
   6.4. Վերլուծության պատշաճ իրականացման, ինչպես նաև դրա հավաստիության ընդգծման նպատակով ցանկալի է օգտագործել գծապատկերներ, գծանկարներ, աղյուսակներ, սխեմաներ, նկարներ:
   6.5. Իրականացված վերլուծությունն ու ստացված արդյունքները գործնական նշանակություն չեն կարող ունենալ՝ առանց դրանց պատշաճ մեկնաբանման:
   6.6. Արդյունքները պետք է ներկայացնել տրամաբանական հաջորդականությամբ՝ ըստ կարևորության:
   6.7. Հետազոտության արդյունքները պետք է հնարավոր լինի ստուգել:
   6.8. Հետազոտության արդյունքները կարող են հաստատել/հերքել հետազոտության շրջանակում առաջ քաշված վարկածները, ինչը դառնում է հեղինակի ներդրումը թեմայի ուսումնասիրվածության մեջ:
   6.9. Արդյունքներն անհրաժեշտ է նկարագրել ընկալելի կերպով՝ մատնանշելով կատարված բացահայտումները և դրանց ապացուցողական հենքը:
   6.10. Ստացված արդյունքներն ու բացահայտումներն անհրաժեշտ է հակիրճ կերպով ամփոփել շարադրանքի վերջում:
   6.11. Արդյունքների ներկայացումը պետք է շարադրված լինի անցյալ կատարյալ ժամանակով՝ խուսափելով «ես հայտնաբերեցի», «մենք բացահայտեցինք» ձևակերպումներից: Փոխարենը՝ պետք է կիրառել

«հետազոտության արդյունքում պարզվեց, հայտնաբերվեց» և համանման այլ ձևակերպումներ:

7. **Եզրակացությունները** շարադրելիս անհրաժեշտ է խուսափել հետազոտության նախորդ բաժիններում օգտագործված ձևակերպումների բառացի վերապատմումից: Չի կարելի ներկայացնել արդյունքներ, որոնք հետազոտության մեջ չեն քննարկվել: Եզրակացությունները շարադրվում են 1200-2000 բառի շրջանակում:
   7.1. Եզրակացությունները ներկայացվում են ներածությունում առաջադրված խնդիրների հետ համեմատության միջոցով՝ ընդգծելով դրանց նորույթն ու գործնական նշանակությունը:
   7.2. Եզրակացության մեջ ընդգծվում է հետազոտության խնդրի հաստատումը կամ հերքումը, քննարկվում արդյունքի նշանակալիությունը:
   7.3. Եզրակացությունների բաժնում ցույց է տրվում, որ հետազոտողը պատասխանել է առաջադրված հարցերին և ստուգել իր կողմից առաջ քաշված վարկածները:

8. **Գրականության ցանկում**.
   8.1. **Նախ և առաջ՝** արտացոլվում են իրավական ակտերը՝ ըստ տեքստում օգտագործման հերթականության:
      - Սկզբում՝ իրավական ակտի լրիվ անվանումը, բաժինը, հոդվածը, կետը, ընդունման տարին, ամիսը, օրը, ընդունող մամինը, վերջում՝ հղումը (եթե առկա է): **Օրինակ՝** Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին, հանրաքվեի արդյունքում, հղում:
   8.2. **Դրանից հետո** ներկայացվում է հայերեն մասնագիտական գրականությունը՝ ըստ հեղինակի (հեղինակների) ազգանվան այբբենական հերթականության:
      - Նշվում են հեղինակի (հեղինակների) ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը, աշխատության լրիվ անվանումը, բաժանիչ՝ // նշան, հատորը, հրատարակչությունը, հրատարակման վայրը, տարեթիվը, էջերի ընդհանուր քանակը, DOI-ն (եթե առկա է): **Օրինակ՝** Պողոսյան Ա., Գրիգորյան Գ., Պետության սահմաններն ու պետական ծախսերի օպտիմալացումը // 1-ին հատ., Տնտեսագետ, Երևան 2022, 258 էջ, DOI:

8.3. Նույն հեղինակի աշխատանքները պետք է դասավորել հրապարակման տարեթվի աճման կարգով կամ շարադրանքի մեջ հղումների հերթականությամբ:

8.4. Օտարալեզու գրականության ցանկը ձևավորվում է նույն տրամաբանությամբ, ինչ հայերենը, աղբյուրները՝ բնօրինակի լեզվով:

8.5. Վերջում լրացվում են գրականության ցանկի համացանցային կայքերը:

8.6. Գրականության ցանկում ներառված մասնագիտական գրքերի և հրապարակումների ընդհանուր թվի մոտ 25%-ը պետք է հրատարակված լինի առնվազն 5 տարի առաջ:

(կանոնակարգի N 3 հավելվածի 8-րդ կետի 8.6-րդ ենթակետը փոփ. 27.09.2024 N 1-8)

Հավելված N 4

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶՈՒՄ ՄԵՋԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄՏՔԻ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. **Ուղղակի մեջբերումն** այլ՝ արդեն իսկ հրապարակված տեքստի կամ դրա առանձին մասի բառացի վերարտադրությունն է մագիստրոսական թեզում:
2. Մեջբերումը պետք է առանձնացվի չակերտներում՝ առանց ոճի, մտքային (իմաստային) և շարահյուսության փոփոխության:
3. Մեջբերումը ցանկալի է լինի ամբողջական: Մեջբերվող տեքստը չի կարող կրճատվել կամայական ձևով:
4. Եթե կատարվում է մեկ ամբողջական նախադասության (և (կամ) 3 տողը չգերազանցող պարբերության) մեջբերում, ապա մեջբերման առաջին բառը չակերտներում գրվում է մեծատառով:
5. Եթե կատարվում է հեղինակի արտահայտած ամբողջական մտքի մի մասի մեջբերում, ապա տեքստում չակերտներում մեջբերվող խոսքից առաջ կամ դրանից հետո դրվում է բազմակետի նշան՝ կախված նրանից, թե մտքի, որ հատվածն է մեջբերվում: Օրինակ՝ «…մեջբերվող միտքը» կամ «մեջբերվող միտքը…»:
6. Մեջբերվող տեքստի կրճատման (իմաստը պահպանելով) համար կարելի է օգտագործել նաև բացատրող բառեր (դրանք առանձնացնելով փակագծերում):
7. Եթե մեջբերվող տեքստը գերազանցում է 3 տողը, ապա անհրաժեշտ է փոխել տառաձևը (գրելով շեղատառ): Անհրաժեշտ է նաև ձախից թողնել 2 բացատ մեջբերվող ամբողջ տեքստի համար:
8. Յուրաքանչյուր մեջբերվող մաս պետք է ունենա իր հղումը, **որը դրվում է չակերտից անմիջապես հետո** և տրվում է սույն կարգով սահմանված գրականության ցանկի ձևավորման պահանջներով:
9. Հղման մեջ սկզբնաղբյուրի վերաբերյալ տվյալները պետք է ներկայացվեն ամբողջությամբ և ճշգրիտ կերպով:
10. Արգելվում է ուղղակի մեջբերումների մեծ քանակը՝ առանց դրանց մանրամասն վերլուծության: Նման դեպքերում ավարտական աշխատանքը համարվում է ոչ ինքնուրույն կատարված:
11. **Մտքի վերաշարադրումը** (перефразирование, paraphrasing) մեջբերվող նյութի՝ գիտական մշակման արդյունքում, սեփական ձևակերպմամբ օգտագործումն է՝ արտահայտված մտքի ընդհանուր տրամաբանության պահպանմամբ:
(կանոնակարգի N 4 հավելվածի 11-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)

12. Մտքի **վերաշարադրումն** օգտագործվում է մեծ ծավալով մեջբերումների դեպքում, որի տարատեսակ է համարվում նաև մեջբերման ամփոփումը:
13. Մտքի **վերաշարադրման** (перефразирование, paraphrasing) կամ մեջբերման ամփոփման դեպքում հղումը վերաբերում է ամբողջ մտքին՝ դրվելով պարբերության (կամ նախադասության) վերջում:
    (կանոնակարգի N 4 հավելվածի 13-րդ կետը փոփ. 27.09.2024 N 1-8)
14. «Ուղղակի մեջբերում», «մտքի վերաշարադրում» և «մեջբերման ամփոփում» տարբերակների ընտրությունը կախված է նրանից, թե մագիստրոսական թեզի, որ բաժինն է ձևավորվում: Գրականության ակնարկի համար ընդունելի և կիրառելի է մեջբերման ամփոփումը, սահմանումների պարագայում՝ ուղղակի մեջբերումը, իսկ ընդհանրացումների համար՝ մտքի վերաշարադրումը:

Հավելված N 5

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

«_____» մասնագիտության

«_____» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա (հեռակա) ուսուցման համակարգի 2-րդ (3-րդ) կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ հանձնաժողովի **գնահատման թերթիկ**

	Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն	Մագիստրոսական թեզի թեմայի վերնագիր	Գնահատման գործոնների կշիռ*(միավոր)			
			I	II	III	IV

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ

Ծանոթություն.

I. մագիստրոսական թեզի բովանդակությունը,

II. մագիստրոսական թեզի ինքնուրույնության աստիճանը,

III. մագիստրոսական թեզի ներկայացման որակը,

IV. տրված հարցերի և դիտողությունների պատասխանների ամբողջականությունը և խորությունը:

Հավելված N 6

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՊՏՀ _____ ամբիոնի վարիչ

_____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Մագիստրոսական թեզի կատարման ժամանակացույց

N	Առաջադրանք	Ժամկետ	Ղեկավարի ստորագրություն	Ուսանողի ստորագրություն
	Թեմայի նախնական քննարկման և գործողությունների պլանի հաստատման ամսաթիվ:			
1.	Հետազոտության նպատակի առաջադրում, առաջադրված նպատակից բխող առանցքային հարցերի և խնդիրների ձևակերպում, հետազոտության օբյեկտի և առարկայի հստակեցում:			
2.	Հետազոտության թեմային առնչվող մասնագիտական գրականության, հրապարակումների ու հետազոտական նյութերի հավաքագրում, ուսումնասիրություն և գրականության ակնարկի շարադրում:			
3.	Հետազոտության իրականացման մեթոդների ուսումնասիրություն, կիրառվելիք մեթոդաբանության ընտրություն և ընտրության հիմնավորում:			
4.	Հետազոտության համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության հավաքագրում, ամփոփում և մշակում:			

5.	Վերլուծության (վերլուծությունների) իրականացում, արդյունքների ամփոփում և շարադրում:			
6.	Հետազոտության արդյունքների ամփոփում և եզրակացությունների շարադրում:			
7.	Մագիստրոսական թեզի ստուգում հակագրագողության համակարգում՝ ըստ ուսանողի ցանկության:	1. 2. 3.		
8.	Օգտագործված գրականության ցանկի ձևավորում:			
9.	Մագիստրոսական թեզի համառոտագրի, հիմնաբառերի և ներածության շարադրում:			
10.	Վերջնական տարբերակի համատեղ քննարկում, հաստատում և ներկայացում ամբիոն:			
11.	Մագիստրոսական թեզի պաշտպանության ելույթի և շնորհանդեսի նախապատրաստում:			

Մագիստրոսական թեզի հաստատված ժամանակացույցի կատարման վերաբերյալ ղեկավարի նկատառումներ

	Առաջադրանք	**Հաստատված ժամկետ**	**Ղեկավարի նկատառումներ**	**Ղեկավարի ստորագրություն**
1.	Հետազոտության նպատակի առաջադրում, առաջադրված նպատակից բխող՝ հետազոտության առանցքային հարցերի և խնդիրների ձևակերպում, հետազոտության օբյեկտի և առարկայի հստակեցում:			
2.	Հետազոտության թեմային առնչվող մասնագիտական գրականության, հրապարակումների ու հետազոտական նյութերի հավաքագրում, ուսումնասիրություն և գրականության ակնարկի շարադրում:			

3.	Հետազոտության իրականացման մեթոդների ուսումնասիրություն, կիրառվելիք մեթոդաբանության ընտրություն և ընտրության հիմնավորում:			
4.	Հետազոտության համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկությունների հավաքագրում, ամփոփում և մշակում:			
5.	Վերլուծության (վերլուծությունների) իրականացում, արդյունքների ամփոփում և շարադրում:			
6.	Հետազոտության արդյունքների ամփոփում՝ որպես եզրակացություններ:			
7.	Մագիստրոսական թեզի ստուգում հակագրագողության համակարգում՝ ըստ ուսանողի ցանկության:	1.		
		2.		
		3.		
8.	Օգտագործված գրականության ցանկի ձևավորում:			
9.	Մագիստրոսական թեզի համառոտագրի, հիմնաբառերի և ներածության շարադրում:			
10.	Վերջնական տարբերակի համատեղ քննարկում, հաստատում և ներկայացում ամբիոն:			
11.	Մագիստրոսական թեզի պաշտպանության ելույթի և շնորհանդեսի նախապատրաստում:			

Հավելված N 7

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՊՏՀ _____ ամբիոնի մագիստրատուրայի առկա (հեռակա) ուսուցման համակարգի 2-րդ (3-րդ) կուրսի ուսանող _____ -ի

«_____»

թեմայով մագիստրոսական թեզի վերաբերյալ

Մագիստրոսական թեզի վերաբերյալ հիմնական հարցադրումները

	Հարց	Այո	Մասամբ	Ոչ
1.	Ներածությունում հիմնավորված է մագիստրոսական թեզի թեմայի արդիականությունը:	☐	☐	☐
2.	Մագիստրոսական թեզի նպատակը, ընտրված օբյեկտը և սահմանված առարկան նպաստել են հետազոտության ամբողջականության ու համակողմանիության ապահովմանը:	☐	☐	☐
3.	Հետազոտական աշխատանքում առաջադրված խնդիրների լուծումները նպաստել են սահմանված նպատակի իրագործմանը:	☐	☐	☐
4.	Գրականության ակնարկում ներկայացված է այլոց կողմից տվյալ թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:	☐	☐	☐
5.	Ընտրված գրականությունն ու այլ աղբյուրներն ապահովում են տվյալ թեմայի լուսաբանման համակողմանիությունն ու տեսակետների բազմազանությունը:	☐	☐	☐
6.	Ընտրված գրականության աղբյուրներն ու վիճակագրական տվյալները ժամանակագրորեն արտահայտում են տվյալ հիմնախնդրի արդի վիճակն ու միտումները:	☒	☒	☐
7.	Ուղղակի մեջբերումների, մտքի վերաշարադրման և մեջբերման ամփոփումների ընթացքում ուսանողը պատշաճ կերպով պահպանել է ակադեմիական բարեվարքության կանոնները:	☐	☐	☐
8.	Հետազոտության համար ընտրված մեթոդաբանությունը նպաստել է թեմայի ուսումնասիրվածության աստիճանի բարձրացմանը, հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրությանը, առաջադրված խնդիրների լուծմանը և սահմանված նպատակի իրագործմանը:	☐	☐	☐
9.	Վերլուծությունների և ամփոփումների բաժնում հետազոտության օբյեկտի վերլուծությունը համակողմանի է, արտացոլում է վերջինիս ներկա վիճակը, օրինաչափությունները, զարգացման ընթացքը, խնդիրներն ու սահմանափակումները:	☐	☐	☐
10.	Եզրակացությունները հետազոտության տրամաբանական ընդհանրացումների ամբողջությունն են:	☐	☐	☐

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

2.

3.

Մագիստրոսական թեզը **համապատասխանում է / չի համապատասխանում** (ընդգծել) առաջադրված պահանջներին:

_____ -ին առաջարկվում է **շնորհել / չշնորհել** (ընդգծել)
(ուսանողի անուն, ազգանուն)

_____ մագիստրոսի որակավորում:

Գրախոս՝ _____
(պաշտոն, ա., ա., հ., ստորագրություն)

«_____» _____ 20 _____ թ.